ԱՆԻՈՒՄ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ԸՍՏ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Զաքարյանների մղած աղատագրական պատերազմներին և Անիին նվիրված գրականության մեջ մինչ այժմ որոշակի դրված չի եղել այն հարցը, թե ինչ պայմաններում և ինչպես է Անին վերջնականապես աղատվել Շեդդադյան ամիրաների տեական իշխանությունից և անցել Զաքարյան եղբայրներին։ Նշվում է միայն այդ կարևոր իրադարձության թվականը՝ 1199, որի մասին վկայում է Վարդան Արևելցին[1] և որը հաստատվում է հարակից տվյալներով, մասնավորապես քաղաքի վերջին Շեդդադյան ամիրա Սուլթանի (Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուր իբն Մանուչիհր)՝ Աբու-լ-մա-Ամրան մզկիթի վրա թողած պարսկերեն արձանագրության ժամանակով՝ գրված հիջրի 595 (1198/99) թ.[2]։ Այն իրավամբ համարվում է Շեդդադյանների թողած վերջին հիշատակությունն Անիում։

Սուլթանը բավական սերտ հարաբերությունների մեջ էր քաղաքի հայ բնակչության հետ։ Արձանագրություններից մեկում, գրված 1193 թ. անեցի Տրդատ քահանայի կողմից Ս. Փրկիչ եկեղեցու պատին, նշվում է՝ «Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Բարսղի Հայոց կաթողիկոսի եւ յամիրապետութեանն բարեհանուն Սուլդանի որդի Ամիր Մահմուտի թոռն Մանուչէի...»[3], իսկ Շիրակավանի (Երազգավորս) անթվական արձանագրություններից մեկում, ուր ոմն Գնել հայտնում է Ամենափրկիչ եկեղեցու նորոգման մասին, ասվում է, որ գործը կատարվել է «միջնորդութեամբ տեառն Բարսղի եպիսկոպոսի եւ յաւագուրբեանս Անոյ Սուլտանի. եւ այս գործոյս պատճառ շիրակաւանեցիք եղեն՝ քահանայք եւ տանուտէրք...»[4]։

Սուլթան ամիրայի օրոք էր, որ անեցիները քաղաքում կաթողիկոսական աթոռը վերականգնելու մի համարձակ ձեռնարկ իրականացրեցին և 1195 թ. Անիում կաթողիկոս ձեռնադրեցին իրենց արքեպիսկոպոս Բարսեղին (Բարսեղ Բ Անեցի)[5]։ Նույն ժամանակաշրջանում Անիում ու Շիրակում հոգևոր-եկեղեցական կյանքի ծաղկմանը վերաբերող բազմաթիվ տեղեկությունները, 1186-ին անեցիների կողմից մահմեդական ավազակների որջ դարձած Ծառա-

---

1 *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 181 (այսուհետև՝ Վարդան Արևելցի)։*

2 Ղ. *Ալիշան. Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 59—60, 101։* Л. Гюзалян Персидская надпись Кей Султана в Ани — Сборник статей (академику Н. Я. Марру). М.—Л., 1935 с. 629—641 *(ամիրայի անվան՝ Քեյ Սուլթան ձևի անճշտության մասին նշել է Վ. Մինորսկին.* V. Minorsky. Studies in Caucasian History. London 1953, p. 100) Հ. *Մանանդյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1977, էջ 126, Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 482, 534։ Պ. Մուրադյան. Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Երևան, 1977, էջ 105, ծան. 33։ Թ. Հակոբյան. Անիի պատմություն. հ. Բ, Երևան, 1982, էջ 127։ Խ. Թորոսյան. «Թադակիրների պատմությունն ու դավաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր. Երևան, 1992, էջ 469 և այլն։ Արձանագրությունն առևտրատնտեսական բնույթ ունի։ Այն առաջին անգամ հրատարակել է Ն. Խանիկովը 1849 թ.։*

3 *Դիվան հայ վիմագրության, պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 47 (այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են—Կ. Մ.)։*

4 Ն. *Սարգիսյան. Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս. Վենետիկ, 1864։ Ինչպես երևում է Բարսեղի սոսկ եպիսկոպոս կոչվելու հանգամանքից, այս արձանագրությունը նախորդից ավելի վաղ է գրվել։*

5 Կ. *Մաթևոսյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և քաղաքամայր Անին.— «Էջմիածին», 1993, Ա-Բ-Գ, էջ 131—132։*

քար ամրոցի գրավման փաստը և այլն[6], վկայում են, որ քաղաքացիներն արդեն բավական հզոր ուժ էին ներկայացնում և Շեդդադյան վերջին ամիրայի ունեցած իշխանությունն ավելի շուտ միայն իրավական էր, քան թե իրական (պատահական չէ, որ Շիրակավանի արձանագրության մեջ այն կոչվում է ընդամենը «ավագություն»)[7]։

Ահա այսպիսի պայմաններում են Հայաստանի հյուսիսային շրջաններում իրենց հաղթարշավը սկսում Զաքարյանները։ Հայ պատմիչներն ու օտար հեղինակները, որոնք Անիի Վրաց թագավորությանն անցնելու նախորդ՝ 1124—26, 1161—64, 1174—76 թթ. դեպքերի մասին բավական պերճախոս են, Զաքարյանների կողմից քաղաքի գրավման մասին գրելիս սահմանափակվում են սոսկ գրավված վայրերի ընդհանուր թվարկման մեջ այդ փաստն արձանագրելով[8]։ Անիի պատմության այս բախտորոշ դրվագին անդրադարձած հեղինակն իրավամբ դժգոհում է, որ անհնար է որևէ բան ասել «քաղաքական այդ կարևոր իրադարձության մյուս կողմերի՝ պատրաստման ընթացքի, տեղի ունեցած մարտերի... Շեդդադյանների դիմադրության և քաղաքի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքների մասին»[9]։

Բարեբախտաբար Երուսաղեմի ձեռագրացուցակի 1990 թ. հրատարակված տասներորդ հատորում տեղ գտած մի հիշատակարան գալիս է որոշ պարզություն մտցնելու այս հարցում և մասնավորապես որոշակի է դարձնում Անիի Շեդդադյան վերջին ամիրա Սուլթանի ճակատագիրը։ Ձեռագիրը, որից ընդօրինակվել է հիշատակարանը, չի պահպանվել, բայց հայտնի է, որ այն եղել է երկաթագիր Ավետարան։ Հակոբ անունով քահանան այն կազմելու է տարել Հոռոմոսի վանք, ուր գործն իրականացրել են տեղի միաբաններ Հովհաննես և Վարդան եղբայրները։ Դրանից հետո գրվել են երկու փոքր հիշատակարաններ՝ մեկը՝ Մարկոսի ավետարանի վերջում՝ «զՅակովբ քահանայ եւ զծնօղս նորա, եւ զՅովհաննէս վերակացու հոգեւոր գործոյս յիշեցէք ի բարին», մյուսը՝ Ղուկասի ավետարանի վերջում. «Յակովբ երէց բնակիչ գեղջն որ կոչի Տռես ստացաւ զՍուրբ Աւետարանս եւ աղաչէ յիշել զինքն եւ զծնօղսն եւ զՅովհաննէս եւ զՎարդան եղբարք, որք կազմեն։

Կազմեցաւ ի դրան Սրբոյ Կարապետիս ի վանքս Հոռոմոսի ի նշանաւոր տարւոջ, քանզի ամաւ մի յառաջ փախեաւ Սուլտանն յԱնւոյ եւ տիրեցին քրիստոսասէր զօրավարքն Հայոց եւ Վրաց՝ Զաքարէ եւ Իվանէ, որոց աւգնեա Քրիստոս Աստուած. ՈԽԸ (1199) էր թու.»[10]։

---

6 Նույն տեղում, էջ 129—131։ Վարդան Արևելցի, էջ 174։

7 Ինքնուրույնության համար անեցիների մղած պայքարը սկսվել էր շատ ավելի վաղ։ XII դարի կեսերին նրանք արդեն հասել էին շոշափելի արդյունքների, անգամ կարող էին սեփական հայեցողությամբ ամիրա փոխել, քաղաքը հանձնել իրենց նախընտրած իշխողին (տե՛ս Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի XII դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 97—103։ Կ. Մ ա թ ե ո ս յ ա ն. Անի քաղաքի հոգևորականությունը.—«Էջմիածին», 1993, ԺԱ—ԺԲ)։ Իսկ 1174 թ., երբ երրորդ անգամ վրացիներին անցած քաղաքի կառավարիչ նշանակված Իվանե Օրբելին փորձեց Անին հանձնել աթաբեկ Ելտկուզին, անեցիները, տեղեկանալով, խափանեցին այդ ծրագիրը, հետևաբար ինքնուրույն դինուժ ունեին։ Այդ նույն ուժը գործադրելով էր, որ 1186-ին անեցիները կարողացան գրավել Ծառաքար (հավանորեն սա քաղաքից հարավ ընկած Մաղասբերդն է) ամուր ամրոցը։

8 Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 181։ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց. Երևան, 1964, էջ 163։ Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 391 և այլն։

9 Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 127։

10 Ն. Պ ո ղ ա ր յ ա ն. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. հ. Ժ, Երուսաղեմ, 1990, էջ 605։ Հիշատակարանում նշված Հակոբ քահանայի բնակավայր Տռես գյուղն այլ աղբյուրներում չի հանդիպում։ Հրատարակիչն այդ անվան մոտ հարցական նշան է դրել, բայց չգիտենք գյուղանվան անծանոթությունն է նկատի ունեցել, թե նրա թերընթեռնելիությունը։ Ամեն դեպքում այդպիսի տեղանվան գոյությունն անսովոր չպետք է թվա, քանի որ «ծուռ» (ծռ) արմատով բավական տեղավայրեր ունենք (Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. Բ, Երևան, 1988, էջ 867)։

Հրատարակիչը «սուլթան» բառը գրել է փոքրատառով, հավանաբար տիտղոս կարծելով, մինչդեռ կասկածից վեր է, որ խոսքն այստեղ Անիի ամիրա Սուլթանի մասին է։ Այսպիսով, հիշատակարանի շնորհիվ պարզ է դառնում, որ Զաքարյանները Անի են մտել Նրա իրավական տիրոջ՝ Շեդդադյան Սուլթան ամիրայի մահից հետո։ Բնական էր այդ մահը, թե «պալատական խարդավանքի» արդյունք, դժվար է ասել, բայց մի բան ակներև է, որ մահացած ամիրայի քաղաքը որևէ դիմադրություն չէր ցուցաբերելու Զաքարյաններին։ Թերևս այս է պատճառը, որ պատմիչները դեպքի կապակցությամբ հավելյալ մանրամասնություններ չեն հայտնում։ 1124 թ. Անին առաջին անգամ գրաված Վրաց Դավիթ Շինարար թագավորը կալանեց ամիրա Աբուլասվարին՝ ընտանիքով հանդերձ ուղարկեց Վրաստան, ուր բոլորը մահացան. 1174-ին Գեորգին նույն կերպ վարվեց բաղաքի ամիրա Շահնշահի հետ[11], սակայն Սուլթանի մահից հետո Անիին տիրացած Զաքարյանները կարիք չունեին բռնություն կիրառելու։ Նրանք չհանդիպեցին նաև շրջակա մահմեդական իշխանությունների հակազդեցությանը, որպիսին լինում էր ամեն անգամ, երբ վրացիները գրավում էին քաղաքը։ Ինչպես արդեն նշեցինք, XII դարի վերջերին Շեդդադյանների իշխանությունն Անիում թույլ էր և որոշ իմաստով ձևական բնույթ էր կրում։ Իսկ ամիրայի մահից հետո այն պետք է որ ինքնըստինքյան կաղմալուծվեր՝ արագորեն տեղը զիջելով նոր, քրիստոնեական իշխանատնությանը՝ հանձինս Շիրակի դարպասները թակող զորեղ Զաքարյանների։

Ե՞րբ է տեղի ունեցել Սուլթանի մահը և Անիի անցումը Զաքարյաններին։ Ըստ ներկայացված հիշատակարանի, որը գրվել է Հայոց ՈՒԸ (1199) թվականին, դեպքեր կատարվել են դրանից «ամաւ մի յառաջ», այսինքն՝ 1198-ին[12]։ Ուշագրավ է, որ Հոռոմոսի վանքում Մխիթար վանահոր թողած վիմագիր արձանագրություններից մեկում Անիի Զաքարյաններին անցնելու տարին նույնպես 1198 է նշվում. «Ի ՈՒԷ (1198) թիւս ...ի տէրութեան քաղաքիս եւ բոլոր երկրիս Մեծ Հայոց Քրիստոսի մեծ զաւրականացս Զաքարէի եւ Իւանէի, որոց հովանի լիցի Սուրբ Երրորդութիւն»[13]։

Այսպիսով, հիշյալ իրադարձության համար Անիի իրականությանն այնքան մոտ կանգնած Հոռոմոսի վանքից ծագող երկու սկզբնաղբյուրներում ունենք միևնույն 1198 թ.։ Ինչպես վերը ասվեց, հայագիտության մեջ որպես Անիի ազատագրման տարի հաստատապես ընդունված է 1199 թ., որի համար հիմնական փաստարկ է ծառայում Սուլթանի թողած պարսկերեն արձանագրության թվականը[14]։ Այստեղ առաջին հայացքից թվացող հակասությունը, մեր կարծիքով, հնարավոր է լուծել առկա թվականների ուշադիր քննությամբ։ Սուլթան ամիրայի արձանագրության վերջում նշված է հիջրի 595 թ., որն ընդգրկում է 1198 թ. նոյեմբերի 3-ից 1199 թ. հոկտեմբերի 23-ը ընկած ժամանակաշրջանը, իսկ Հայոց ՈՒԷ թվականը կազմում է 1198 թ. հունվարի 31-ից 1199 թ. հունվարի 31-ը ներառող տարին։ Հետևաբար թվագրման տարբեր

---

11 Վարդան Արևելցի. էջ 157, 169։ 1176 թ. Գեորգին ստիպված էր Անին վերադարձնել Շեդդադյաններին՝ «առ իւր տեարսն» (Ն. Պողարյան, Ցուցակ, էջ 289, հմմտ. Մաղաքիա ժամանակագրություններ. հ. II, Երևան, 1956, էջ 502)։

12 Եթե հիշատակարանը փորձենք մեկնաբանել այլ կերպ և նրա վերջում նշված 1199 թ. ընդունենք որպես «ամաւ մի յառաջ» եղած տարին (քանի որ այն անմիջապես հաջորդում է Սուլթանի ու Զաքարյանների մասին եղած տեղեկությանը), ապա այդ դեպքում բուն հիշատակարանի գրության թվական պիտի համարենք 1200 թ., մի բան, որ կհակասի հիշատակարանների թվագրման ընդունված սկզբունքին, ըստ որի ամեն մի հիշատակարանի վերջում նշվում է հենց նրա գրության տարին։

13 Ն. Սարգիսյան. նշվ. աշխ., էջ 149։ Արձանագրության մաղթողական վերջաբանը համեմատելի է վերը ներկայացված հիշատակարանի ավարտի հետ։ Երևում է, որ երկուսն էլ գրվել են դարակազմիկ իրադարձության թարմ տպավորության տակ։

14 Տե՛ս ծան. 2։

համակարգերով նշված երկու թվականներն ունեն երեք ընդհանուր ամիս (1198 թ. նոյեմբեր, դեկտեմբեր, 1199 թ. հունվար)։ Դատելով իրադարձությունների տրամաբանությունից, կարող ենք ենթադրել, որ Սուլթանը մահացել է իր արձանագրության փորագրումից կարճ ժամանակ անց, որին անմիջապես հաջորդել է Զաքարյանների մուտքն Անի և այս ամենը տեղի է ունեցել Հայոց Ոխէ թվականի վերջին երեք ամիսների ընթացքում։ Հարցի նման մեկնաբանության դեպքում ոչ միայն վերանում է Սուլթանի արձանագրության և Հոռոմոսի սկզբնաղբյուրների թվականների թվացյալ հակասությունը, այլև այդ աղբյուրները միմյանց լրացնելով թույլ են տալիս բավական մեծ ճշգրտությամբ որոշել Անիում Շեդդադյանների տիրապետության ավարտի ու Զաքարյանների պատմաշրջանի սկզբի ժամանակը։

Այսպիսով, վերը կատարված վերլուծությունից եզնելով կարող ենք եզրակացնել, որ Անիի անցումը Զաքարյաններին տեղի է ունեցել Հայոց Ոխէ թվականի վերջերին (1198 թ. նոյեմբեր-դեկտեմբեր, 1199 թ. հունվար)։

Ավարտելուց առաջ նշենք, որ Հակոբ քահանայի ստացած ձեռագրի հիշատակարանները, որոնք առիթ դարձան Անիի պատմության մի կարևոր դրվագի մանրամասների բացահայտման համար, արժեքավոր են նաև Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմության տեսանկյունից, քանի որ հիշարժան տեղեկություններ են պարունակում տեղի հմուտ գրիչ Հովհաննեսի ու նրա եղբայր Վարդանի մասին15։

---

15 «Յովաննես մեր երևելի գրիչներից է»—գրում է Գ. Հովսեփյանը Հոռոմոսցի վարպետի մասին (Յիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 486), որը միաժամանակ ծաղկող էր, իսկ բերված հիշատակարանից իմանում ենք, որ նաև կազմարարությամբ էր զբաղվում։ Հովհաննեսից մեզ է հասել երեք ձեռագիր։ Առաջինը 1181 թ. Ավետարանն է (Վենետիկ, № 961/82), ուր հիշատակարանում նա նշում է, թե գործը կատարել է «Հրամանաւ Վարդանայ երկց եղբաւր իմոյ եւ ուսուցչի...»։ Հաջորդ երկու ձեռագրերում ևս գրիչը հիշատակում է միաբան եղբորը (Երուսաղեմ, №№ 1801, 3299)։ Հովհաննեսն ու Վարդանը վերջին անգամ հիշվում են 1187 թ. (Կ. Մ ա թ ևոսյան. Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմությունից.—«էջմիածին» 1984, Երևան, էջ 47—48)։ Հակոբ քահանայի հիշատակարանների շնորհիվ Հովհաննեսին ու Վարդանին կրկին հանդիպում ենք 1199-ին Հոռոմոսում ձեռագիր կազմելիս։ Հիշատակարաններից առաջինում Հովհաննեսի մասին ասվածը՝ «զՅովհաննէս՝ վերակացու հոգևոր գործոյս...» մտածել է տալիս, որ նրա դերը չի սահմանափակվել սոսկ կազմարարությամբ։ Հնարավոր է, որ նա օգնել է Հակոբ քահանային՝ ձեռագիրը ձեռք բերելու գործում։